# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հարթագյուղ
համայնք, Հեռ. 094-17-27-72, hartagyugh.lori@mta.gov.am

N-0/047

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

*17 մայիսի 2017թ.*

Հարգելի պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Հարթագյուղ համայնքի ղեկավարի թիվ N-10,11,12,13 որոշումները:

Առդիր՝ 4 թերթ.

Համայնքի ղեկավար՝ Ա.Հարությունյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հարթագյուղ համայնք, հասցե գ Հարթագյուղ
էլ. փոստ՝ hartagyugh.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» ապրիլի 2017 թվականի N-10

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 14.02.2017թ, թիվ 13 դրական եզրակացությունը, և Հարթագյուղ համայնքի ավագնու 10 ապրիլի 2017 թվականի թիվ 8 որոշման

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.04 հեկտար գյուղատնտեսական նշանակության արոտ /կադաստրային ծածկագիր՝ 06-061-0215-0001/, բջջային կապի կայան կառուցելու նպատակով, փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կապի հողերի գործառնական նշանակության, և հասցեավորել փողոց 13 , նրբանցք 7,հողամաս 9 հասցեով:

Հարթագյուղ համայնքի ղեկավար _____ Ա.Հարությունյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

20 17 թ. ապրիլի 11
( գ.) Հարթագյուղ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հարագյուղ համայնք,
Հեռ. 094-17-27-72, hartagyugh.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի 2017թ. N-11

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի պահանջներով և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի << Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման ,անվանափոխման անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմնի սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշումով .

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լոռու մարզի Հարթագյուղ համայնքում

1) 018-001 ծածկագրի տակ գտնվող 0.99 քառ.մ հողամասը հասցեավորել 6 փողոց, 1 նրբանցք,փակուղի 1, տուն 3 հասցեով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հարթագյուղ
համայնք, Հեռ. 094-17-27-72, hartagyugh.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

04 մայիսի 2017 թվականի N-12

### 06-061—0065-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով,<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ 50-Ն օրենքով, ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/06/2010թ. թիվ 186-Ն հրամանով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշումը:

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Հարթագյուղ համայնքի 06-061-0065-0003 ծածկագրի տակ գտնվող 0.15434 հա հողամասի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը և 0.15434 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Հենրիկ Գևորգի Մկրտչյանի /ծնված 1965թ./ սեփականության իրավունքը:
2.Հողամասը չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում ,հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Հարթագյուղ համայնք 8 փողոց, 22 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<12>> ՄԱՅԻՍԻ 2017ԹՎԱԿԱՆԻ N-13

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելով Հարթագյուղ համայնքի բնակիչ Հերիքնազ Սարգսի Պապոյանի կողմից ներկայացված դիմումը՝ Լոռու մարզի Հարթագյուղ համայնքի 1 փողոց 42 հասցեում գտնվող 2015 թվականին կառուցված ինքնակամ կառույցները օրինականացնելու խնդրանքը և նկատի ունենալով, որ տվյալ շինությունների պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և քանի որ շենք, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում , կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 05022013-06-0264 վկայականը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 18/05/2006 թ թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 11-րդ , 19, 21 և 22.1 կետերի պահանջներով

## ՈՐՈՇԵՑԻ

1. Օրինականացնել Հերիքնազ Սարգսի Պապոյանի /անձնագիր AN 0330549/ կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող06-061-0066-0003 ծածկագրի տակ գտնվող 0.1006 հա տնամերձ հողամասի վրա 2015 թվականին ինքնակամ կառուցված 116.87 քմ ավտոտնակը ու 2.63 քմ պարիսպը և վերոնշյալ ավտոտնակի և պարիսպի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Հերիքնազ Սարգսի Պապոյանի /անձնագիր AN 0330549/ սեփականության իրավունքը:
2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել 36150 ՀՀ դրամ :
3. Օրինականացման համար սահմանված վճարները 60- օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ